

2285

3949

ՉԵԿՈՒՑՈՒՄՆ

Ե Ի

Հ Ա Շ Ի Ի

Երեցփոխանի Տափի քաղի

Ս. ԳԷՈՐԳ. ԵԿԵՂԵՑՈՒ

ՆՈՅՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԺԻՆԿԸՆԸՑ ԺՈՂՈՎԻՆ

ի 29 Մայիսի 1894 ամի

Կ Գ. ԹԻՖԼԻՍ

Типография М. Варганянца, Велиж. ул. д. № 7.

Կարան Մ. Վարդանեանցի

1894



13595

13595

Հրամանաւ Վեհափառ Հայրապետի ազգիս

Թոյլատրի տպագրութիւն:

20 Օգոստոսի 1894 Վ. թ.

Դիւանապետ Խորէն Մ. Վարդ. Ստեփանէ

ՋԵՎՈՒՅՈՒՄՆ ԵՒ ՀԱՃԻԻ

Երէցփոյզանի Տափի Թաղի ս. Գէորգ եկեղեցու.

Дозв. Цензурою, 18 Ноября 1894 г. г. Тифлисе.

Ընդհանուր ընդունուած օրէնքին եւ սովորութեան հետեւելով, որ ամեն մի ընտրուած պաշտօնեայի վրայ պարտաւորութիւն է զնում հաշիւ եւ համար տալ իր ընտրողներին եւ ստանալ նրանցից հրահանգ իր գործունէութեան վերաբերմամբ, ես եւս, իբրեւ Տափի Թաղի ս. Գէորգ եկեղեցու ծխական ժողովրդից ընտրուած մի պաշտօնեայ, որին այդ ժողովուրդը հաւատացել է իր եկեղեցու շահերի պաշտպանութիւնը, կազմեցի եւ այս տարուայ մարտ ամսի 6-ին բաժանեցի ծխականներին եկեղեցու տպագրած դրամական համառօտ հաշիւը՝ 1893 թւի համար:

Եկեղեցու վերանորոգութեան խնդիրը, իմ առաջարկութեամբ, ժողովների առանձին քննութեան առարկայ եղաւ եւ որոշումն ստացաւ անցեալ

տարուայ նոյեմբերի 24-ի եւ 28-ի եւ ներկայ տա-
րուայ մարտի 6-ի նիստերի մէջ:

Համաձայն ժողովի որոշման, որ կայացաւ 1893
թւի նոյեմբերի 28-ին, վարձուեցաւ երգեցիկ խումբ,
բաղկացած 15 հոգուց, բացի խմբապետից: Նրանք,
որոնք սովորում են մեր եկեղեցու ուսումնարա-
նում, վարձ չեն ստանում, իսկ խմբապետը, որ
յիշեալ ուսումնարանի երգեցողութեան ուսուցիչն
է, եւ 5 երգիչներ, որոնք մեր եկեղեցու սաներից
չեն, ստանում են թոշակ—խմբապետը ամսական 5
րուբլի, իսկ երգիչները՝ երկու-երկու րուբ., առ
այժմ ընդամենը 15 րուբ. ամսական:

Տարակոյս չը կայ, որ ամեն մի եկեղեցի պար-
տաւոր է ունենալ իր բոլոր ծխականների անթերի
ցուցակը, որից սակայն զուրկ է մեր եկեղեցին:
Ուստի ես դեռ 1893 թւի նոյեմբերի 4-ին, №№ 4
եւ 5 գրութիւններով, գիմեցի մեր եկեղեցու միա-
բան քահանաներին, խնդրելով հաղորդել ինձ իրենց
հովուութեան յանձնած ծուխերի ցուցակը՝ կազմելիք
մատեանի մէջ անցկացնելու համար, նշանակելով
ցուցակի մէջ ծուխերի արական սեռի չափահաս
անդամների հասակը, նրանց ազգանունը, անունը,
հօր անունը, հասցէն, եւ այլն, համաձայն տուած
ձեւի:

Այդ ցուցակները յոյս ունեմ շուտով ստանալ
եւ անցկացնել առանձին մատեանի մէջ, որից յետոյ
մենք միշտ կունենանք մեր ծխականների անուա-
նական ցուցակը, որ շատ կարեւոր է:

Բայց կան եւ այլ կարեւոր հարցեր, որոնք ծա-
գել են իմ պաշտօնավարութեան ընթացքում եւ
որոնց լուծումը ես չեմ կարողացել ստանալ: Թիւրի-
մացութիւնների առաջն առնելու եւ ապագայում
որեւէ արդարացի յանդիմանութիւնից ազատ լինելու
համար՝ ինձ հարկաւոր է ժողովի հրահանգը այդ
հարցերի վերաբերմամբ:

Մտնելով երէցփոխանական պաշտօնի մէջ եւ
չունենալով ձեռքիս որեւէ հրահանգ, որով ես
կարողանայի ղեկավարուել իմ գործունէութեան
ընթացքում, բնականաբար, ես ստիպուած էի շրջա-
հայեաց լինել եւ զգուշութեամբ վերաբերուել գոր-
ծերին եւ ինձ ուղղած պահանջներին այս կամ այն
անձի կամ հիմնարկութեան կողմից: Սկզբից ան-
ծանօթ լինելով գործերին, ես հետեւեցի գոյութիւն
ունեցող ընթացքին. սակայն հետզհետէ առաջ եկան
մի առ մի դանազան խնդիրներ, որոնք բարձր համա-
բելով իմ իրաւասութիւնից, ես ենթարկեցի վիճա-
կային կոնսիստորիայի քննութեան, բայց այդտեղ
եւս հանդիպեցայ զժուարութիւնների:

Ահա այն խնդիրները, որոնց առթիւ ես հան-
գիպեցայ զժուարութիւնների:

Ա. ԵԿԵՂԵՑՈՒ ՕՐԻՈՐԿԱՅ ԾԽԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱ-
ՐԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

Հայոց եկեղեցական-ծխական ուսումնարան-
ները կառավարվում են այն կանոնադրութեան

Հիւանց վրայ, որ հաստատուած է ի Տէր հանգուցեալ Մակար Կաթողիկոսից 1889 թւականին: Այդ կանոնադրութեան 23, 24 եւ այլ յօդուածները անօրինում են, որ ուսումնարանները կառավարուին հոգաբարձուների ձեռքով, որոնց ընտրութեան, հաստատութեան եւ պաշտօնավարութեան ձեւը եւ եղանակը որոշուած են նոյն կանոնադրութեան մէջ: Ընդհանուր կանոններից բացառութիւն է կազմում 32-րդ յօդուածը, ուր ասուած է, թէ՛ «եկեղեցական-ժխական ուսումնարանք, որք պահպանին ինամակալօք, կառավարեցին ընդ ձեռն նոյն խնամակալաց, ընդ նախագահութեամբ քահանայի, զոր խնամակալք՝ միջոցաւ Առաջնորդի՝ առաջարկեն ի հաստատութիւն Վեհափառ Հայրապետի»: Թէ որտեղից են երեւան գալիս այդ խնամակալները, ինչ պայմանաւ, ինչ պարտաւորութիւններով եւ ինչ իրաւունքներով, այդ մասին կանոնադրութիւնը լռում է, յիշելով միայն 44-րդ յօդուածում, թէ ուսուցիչների ընտրութիւնը եւ հաստատութիւնը պատկանում է խնամակալներին:

Թիֆլիսում, ս. Սարգիս եկեղեցու գաւթում, կայ մի օրիորդաց ուսումնարան, որի ծախքը հոգում է Տափի թաղի ս. Գէորգ եկեղեցին իր սեպհական արդիւնքներից, բայց նրա կառավարելու գործը ու եղանակը մի տեսակ անորոշ են, որովհետեւ հոգաբարձութիւն չէ կարգած եւ կանոնադրութեան 23, 24 եւ այլ յօդուածները չեն գործա-

գրվում. իսկ միւս կողմից կայ մի կոնդակ հանգուցեալ Հայրապետի ի 21 դեկտեմբերի 1890 թ. № 530, որը տուած է յանուն նախկին երէցփոխանի ս. Գէորգ եկեղեցու՝ պ. Գէորգ Աքիմեանցի: Այս կոնդակի մէջ ասուած է, որ Վեհափառ Հայրապետը կարգում է Աքիմեանցին «ի պաշտօն խնամակալութեան միդասեան օրիորդական ուսումնարանի Սուրբ Սարգիս եկեղեցոյ Հայոց քաղաքիդ, զորոյ գնիւթականն հոգայք դուք յարդեանց երէցփոխանութեան քում յանձնեալ Ս. Գէորգ եկեղեցոյ տեղւոյդ»:

Պ. Աքիմեանցն այժմ երէցփոխան չէ, ուստի խնդիր է ծագում, թէ ով պէտք է հետամուտ լինի յիշեալ ուսումնարանի կառավարութեան գործին, ինչ նշանակութիւն, իրաւունք եւ պարտաւորութիւն ունի խնամակալի կոչումը ընդհանրապէս եւ պ. Աքիմեանցի վերաբերմամբ մասնաւորապէս, եւ մշտենքենաւոր է շնորհվում այդ կոչումը, թէ պայմանաւոր, ժամանակաւորապէս:

Չը գտնելով կանոնադրութեան մէջ այդ հարցերին պատասխան եւ յայտարարելով այս մասին վիճակային կոնսիստորիային, ես խնդրեցի՝ պարզաբանելով վերոյիշեալ խնդիրները պատշաճաւոր իշխանութեան ձեռքով, տալ ինձ կարեւոր հրահանգ, որպէս զի ուսումնարանի կառավարութեան գործը թիւրիմացութիւնների հանդիպելով, չը վնասուի: Միեւնոյն ժամանակ յայտնեցի եւ իմ համեստ կարծիքը, թէ՛ ա.) խնամակալի կոչումը կարող է

պատկանել այն անձին կամ անձանց միայն, որոնք հոգում են իրենց սեփականութիւնից կամ ուսումնարանի բոլոր ծախքերը կամ նրանց մի որոշ մասը եւ կրում են խնամակալի կոչումը, մինչդեռ շարունակվում է նրանց նուիրատութիւնը. ք.) Խնամակալը պէտք է ձայնի իրաւունք ունենայ ուսումնարանի կառավարութեան միայն տնտեսական մասին վերաբերեալ գործերում, այլ ոչ ուսումնական մասին, քանի որ խնամակալ կարող է հանդիսանալ բոլորովին անգրագէտ մարդ. գ.) Տափի թաղի ս. Գէորգ եկեղեցու ուսումնարանի համար պէտք է նրա ծխականների հոգատարութեամբ կազմել օրինաւոր հոգաբարձութիւն, վերացնելով խնամակալի կոչումը, որովհետեւ ոչ պ. Աքիմեանցը, ոչ ես, նրան փոխարինող արդի երէցփոխանս, ոչինչ չենք նուիրել ուսումնարանին, այլ թէ՛ նա եւ թէ՛ ես վճարել ենք եւ վճարում ենք որոշուած գումարը եկեղեցու արդիւնքներից, եւ ղ.) յամենայն դէպս անհրաժեշտ է հրատարակել կանոններ, որոնց մէջ որոշուած լինին խնամակալութեան վերաբերեալ բոլոր կէտերը:

Կոնսիստորիան պատասխանել է, թէ այդ խնդիրը նա մատուցել է ի տնօրէնութիւն նորին Վեհափառութեան, բայց տակաւին չէ ստացել տնօրէնութիւն:

Այդ խնդրին վերաբերում է եւ հետեւեալ հանգամանքը. սենեակները, որոնց մէջ զետեղուած է ուսումնարանը, պատկանում են ս. Սարգիս

եկեղեցոյն եւ նա դրա համար վարձ էր առնում ուսումնարանից, բայց յետոյ անյարմար համարելով ուսումնարանից վարձ առնելը, սրբազան Սինօդը ի 3 յունիսի եւ ի 20 սեպտ. 1891 ամի. №№ 1984 եւ 3346, հրամանագրեց կոնսիստորիային պահանջել մեր եկեղեցուց 1200 ռ. եւ՝ յանձնել գումարը ս. Սարգիս եկեղեցու վանահօրն «ի կառուցումս ընկարանի վանահօրն, ազատ թողնելով յայնմ հետէ մեր եկեղեցին ի հատուցմանէ տարեկան վարձուց ուսումնարանի»: Այս գումարը ժամանակին վճարուած է եւ ուսումնարանը տարեկան վարձուց ազատուած: Բայց վանահայրը երբեմն պահանջում է, որ մեր եկեղեցին այնու ամենայնիւ հոգայ ուսումնարանի շինութեան նորոգութիւնները:

Ինձ թւում է, թէ նորոգութիւնները պէտք է հոգայ այն հիմնարկութիւնը, որի սեփականութիւնն է շինութիւնը, այսինքն ս. Սարգիս եկեղեցին:

Բ. ՀԱԻԼԱԲԱՐԻ ՏՂԱՅՈՑ ՄԻԴԱՍԵԱՆ ԾԻԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ:

Տափի թաղի ս. Գէորգ եկեղեցու գումարով պահվում է եւ Հաւլաբարի, Շամբորեցոց եկեղեցու գաւթում գտնուած, տղայոց ծխական ուսումնարանը, որ ամսական 130 ռ. ծախք ունի, բայց երբ եւ ո՞ւմնից է կազմուած այդ հոգաբարձութիւնը եւ ի՞նչ ձեւով է որոշուած ծախքի քանակութիւնը, ես ոչ մի պաշտօնական տեղեկութիւն չունիմ: Գիտեմ

միայն, որ պ. Յովհաննէս Մարտիրոսեանցը հոգաբարձու է այդ ուսումնարանում: Յանկանալով, որ եկեղեցու գումարները ծախսուեն օրինասահման եղանակով, ես ի 18 նոյեմբ. 1893 թ. № 5 դիմելով յիշեալ ուսումնարանի հոգաբարձութեան, խնդրեցի հաղորդել ինձ ուսումնարանի հաստատած նախահաշի պատճէնը, որով նա կառավարվում է, համաձայն ՅՅ-րդ յօդ. կանոնադրութեան եկեղեցական-ծխական ուսումնարանաց հայոց, նոյնպէս եւ այն, թէ ինչ ժամանակամիջոցի համար է հաստատուած նախահաշիւը: Հոգաբարձութիւնը ի 18 դեկտ. № 75 պատասխանեց հետեւեալը. «Ուսումնարանը պահվում է Տալիի թաղի ս. Գէորգ եկեղեցու ծախսով եւ պէտք է հոգայ ամեն անհրաժեշտ ծախսերը: Թէպէտ Արիստակէս Եպիսկոպոսի առաջնորդութեան ժամանակ որոշուեցաւ տարեկան նախահաշիւ մինչեւ երեք հազար ռուբ., բայց հոգաբարձութիւնս այդքան ծախս չէ արել. միշտ խնայողութեամբ է ծախսել: Այժմ, բացի անակնկալ ծախսերից, պահանջվում է միմիայն ուսուցիչների եւ ծառայի ուղիները, բայց այս տարի աւելացել է նաեւ թեմական տեսչի ուղիները: Այս մասին անցեալ նոյեմբերի 19-ին, № 4285, վրատտանի եւ իմէրէթի վիճակային կոնսիստորիան հրամանագրու պահանջում է մէկ հարիւր յիսուն ռուբ. մատուցանել յիշեալ կոնսիստորիային մինչեւ ցվերջ տարւոյս: Այսու աղազաւ խնդրեմ առաքել հոգաբարձութեանս

մինչեւ 920-ն ներկայ ամսոյս յիշեալ գումարը, նաեւ ուսուցչաց եւ ծառայի ուղիները՝ 130 ռ., ընդամենը 280 ռուբ.:»

Հաղորդելով այդ մասին կոնսիստորիային ի 21 դեկտ. № 7, ես խնդրեցի պարզաբանել եւ տալ ինձ հրահանգ, թէ ինչպէս պէտք է վարուեմ ես, երբ ինձնից պահանջում են դրամ, իսկ ես չունիմ ի նկատի օրինասահման կարգադրութիւն այս կամ այն պահանջած դրամը վճարելու մասին, կամ պահանջը չէ համապատասխանում գոյութիւն ունեցող կանոնադրութեան, որ, իբրեւ կանոնադրութիւն, պէտք է պարտաւորական լինի ամենքի համար, որպէս զի պաշտօնական եւ ոչ-պաշտօնական անձինքների գործողութիւնները կախում չունենան հաճոյքից:

Մինչեւ այժմ այդ յայտարարութեան պատասխանը չեմ ստացել, իսկ հոգաբարձութիւնը, համաձայն իմ խնդիրքին, հաղորդել է ինձ ի 18 մարտի 1894 թ., № 78, թէ ուսումնարանի աշակերտների թիւը լինում է 100-ից մինչեւ 120, որոնցից, ի բաց հանելով չբաւորներին, ստացվում է 300-ից մինչեւ 400 ռ. տարեկան ուսման վարձ, եւ թէ ծախքերը հետեւեալներն են. ուսուցիչներին՝ 550 ռուբ., միւս ուսուցիչներին—ուսուցաց լեզուի՝ 560 ռ., երգեցողութեան՝ 90 ռ., կրօնի՝ 160 ռ., գծագրութեան՝ 90 ռ., ծառայի 144 ռ., եւ դասական պիտոյքների, վառելիք, շինութեան կարկատանի եւ այլ զանազան ծախքերի—300 մինչեւ

400 րուբ., ուրեմն ընդամենը—1894-ից մինչեւ 1994 րուբ.: Իսկ մուտքն է. եկեղեցուց՝ 1560 ր., Ներսիսեան դպրոցից՝ 50 ր. եւ աշակերտներից՝ 300-ից մինչեւ 400 ր., ընդամենը—1910-ից մինչեւ 2010 րուբ.:

Իմ կարծիքով, հարկաւոր է խնդրել սրբազան Առաջնորդից, որ նա կարգադրէ ենթարկել այդ ուսումնարանի կառավարութեան գործը եւ նախահաշուի խնդիրը ընդհանուր կանոնների:

Գ. ԵՐԿՈՒ ՃԵՄՍ.ՐԱՆԱԻԱՐՏ ՍԱՐԿԱԻԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՈՒՂԱՐԿՈՒԱԾ ԵՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ, Ի ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ Ի ԳԻՏՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅՍ:

Համաձայն կարգադրութեան Սինոդին ս. Էջմիածնի ի 23 սեպտ. 1889 ամի, № 3316, եւ հրամանի կոնսիստորիայի, Տափի թաղի ս. Գէորգ եկեղեցին, բացի 400 ր. միանուագ ճանապարհածախսից, վճարում է տարեկան 1680 րուբ., 1889 թ. հոկտ. 1-ից սկսած, ի պէտս երկու սարկաւագաց, այն է՝ Կարապետ Տէր. Մկրտչեանցի եւ Գէորգ Չորեկչեանցի, որոնք ուղարկուած են արտասահման լի կատարելագործութիւն ի գիտնական առարկայս: Կրա համար եկեղեցին վճարել է արդէն մեծաքանակ գումար, իսկ եկեղեցու ծխականները ոչինչ տեղեկութիւն չունին, թէ ինչ մասնագիտութիւն են սովորում յիշեալ սարկաւագները, ինչ աստիճան է նրանց յառաջադիմութիւնը եւ ինչ է

պատճառը, որ այսքան երկար ժամանակամիջոցում չեն աւարտել իրենց ուսման ընթացքը, մինչդեռ ձեմարանաւարտ երիտասարդները պէտք է որ կարողանային աւարտել իրենց կատարելագործութիւնը աւելի կարճ ժամանակում:

Պ. պ. ծխականներից ոմանք յանձնեցին ինձ ժողովել տեղեկութիւններ, թէ՛—

1) Ո՛ւր եւ ինչ մասնագիտութիւն են սովորում յիշեալ սարկաւագները.

2) Ի՞նչ առաջադիմութիւն են ցոյց տուել նրանք եւ ինչ է պատճառը, որ նրանք մինչեւ այժմ չեն աւարտել ուսման ընթացքը, ստանալով առատ միջոցներ.

3) Ինչ պաշտօն կամ պարապմունք ունեն այժմ, եթէ արդէն աւարտել են ուսումը, եւ

4) Որովհետեւ անարգարութիւն է միեւնոյն անձի տալ այդքան առատ թոշակ եւ այդքան երկար ժամանակ, ուստի դադարեցնել թոշակի վճարումն մինչեւ յիշեալ տեղեկութիւններին ծանօթանալը:

Յայտարարելով այդ ամենը վիճակային կոնսիստորիային, ես խնդրեցի հաղորդել ինձ յիշեալ տեղեկութիւնները՝ պ. պ. ծխականներին զեկուցանելու համար, յարակցելով, թէ այնուհետեւ չը պիտի կարողանամ վճարել թոշակը, մինչեւ որ չը ստանամ ծխականների ժողովի որոշումը:

Այդ յայտարարութիւնը կարգացուեց ծխականների ընդհանուր ժողովներում 1893 թւի նոյեմբերի 24-ին եւ 28-ին, եւ հաւանութիւն ստացաւ:

Ինչպէս երեւում է կոնսիստորիայի գրու-
թիւնից ի 18 նոյեմբ., № 4275, յայտարարութիւնս
մատուցած է ի տնօրէնութիւն ս. Էջմիածնի Սինօզի:
Այնուհետեւ ինձ ցոյց տուեցին անցեալ դեկտեմբ-
բերին մի հեռագիր, որի մէջ ասուած էր, թէ
Վեհափառ Հայրապետը բարեհաճել է հրամայել
վճարել յիշեալ ուսանող սարկաւազների թոշակը:
Այդ հիման վրայ ես դեկտ. 26-ին ուղարկեցի
կոնսիստորիային որոշեալ թոշակը վասն դեկտ.,
յունուար եւ փետր. ամիսների, յարակցելով, թէ
ժողովուրդը ի նկատի առնելով (ա.) որ խնդրած
տեղեկութիւնները չեն հաղորդւում, և) որ յիշեալ
սարկաւազներին վճարուած է արդէն մեծաքանակ
գումար, այն է 8120 ռուբլի եւ գ.) որ անարդարու-
թիւն է այդքան գումար ծախսել երկու ուսանողնե-
րի վրայ, մինչդեռ կարելի էր դրանով ուսում մա-
տակարարել շատերին, եւ չը կամենալով գիտակցա-
բար անարդարութիւն գործել—պահանջում է դա-
դարեցնել վճարքը: Պարտաւորութիւն համարելով
յայտարարել այդ ամենը վիճակային կոնսիստորիային
ի բարեհաճ տնօրէնութիւն, ես աւելացրի եւ այն,
թէ եթէ հաւատանք ինձ հասած մասնաւոր լուրե-
րին, Տէր-Սկրտչեանցը վաղուց արդէն աւարտել է
իր ուսման դասընթացը, ստացել է դօկտօրութեան
վկայական եւ այժմ զբաղուած է ճանապարհոր-
դութեամբ Եւրոպայում, իսկ Չորեքեանցը սովորում
է Լէյպցիգ քաղաքում երաժշտութիւն (պիանօի
վրայ ածել եւ երգել):

Կոնսիստորիան այս տարուայ մարտի 4-ին,
№ 922, հաղորդելով ինձ, թէ տակաւին չէ ստաց-
ուած տնօրէնութիւն ս. Սինօզից, պատուիրեց ինձ
փութով մատուցանել որոշեալ թոշակը վասն մարտ,
ապրիլ եւ մայիս ամիսների, որով ծախսած գումարի
թիւր հասնում է 8540 ռուբլի:

Յանձն առնելով պատասխանատուութիւնը, այս
անգամ եւս ուղարկեցի 420 ռ., յայտնելով, թէ
այդ անսահման թոշակի վերաբերմամբ ես երկու
յատարարութիւններիս մէջ, ի 24-էն սեպտ. եւ
յժ-էն փետր., մատնացոյց եմ արել այն հանգա-
մանքների վրայ, որոնք ես իրաւունք չունեմ ան-
տես առնելու եւ որոնք դժուարացնում են պաշ-
տօնավարութիւնս, բայց եւ այնպէս այդ արգե-
լառիթ հանգամանքները մինչեւ օրս չեն ստանում
օրինասահման լուծումն: Անշուշտ աւելի դիւրին է
հրամայել երէցփոխանին տալ այս կամ այն գու-
մարը, քան թէ քննել լրջօրէն օրինականութեան
չափը: Սակայն միւս կողմից տարակոյս չը կայ, որ կոն-
սիստորիան չէ կարող անտարբեր աչքով նայել, երբ
ոսնակոխ է լինում ոչ միայն կարգ ու կանոն, այլ
եւ արդարութիւն, երբ այս կամ այն գործողու-
թիւնը, ծառայելով մասնաւորի հաճոյքին, մնասում
է ընդհանուրի շահերին, որոնց պաշտպանն է նոյն
իսկ կոնսիստորիան. ուստի անհրաժեշտ է տնօրինել,
որ այդ տեսակ խնդիրները չը մնան առանց լուծելու
6—7 երկար ամիսներ եւ տեղիք չը տան իրաւացի
տրտունջի հասարակութեան կողմից:

Այդ բողոքները մնում են անլսելի, եւ այժմ կախուած է ծխականների ժողովից—շարունակել թռչակը, թէ իսպառ գաղարեցնել:

Գ. ՍՐԲԱԶԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՌՈՃԿԻ ԵՒ ԱՅԼ ՈՉ ՆԱԽԱՍԱՀՄԱՆԱԾ ԾԱԽՔԵՐԻ ՄԱՍԻՆ:

Պատահում է, որ կոնսիստորիան հրամանագրում է մատուցանել նրան մեր եկեղեցու վրայ մասնադրուած այս կամ այն գումարը, օրինակ 1000 ռ. ծախսելու վեհափառի գալստեան առթիւ, 80 ռուբ. ի պէտս շինութեան կամրջի յորդանանու, 100 ռ. ի պէտս ռոճկի առանձին քարտուղարի Առաջնորդի, 150 ռ. ի պէտս ռոճկի թեմական տեսչի եւ այլն:

Այդ մասին ես այս տարուայ մարտի 25-ին, № 18 գրութեամբ, դիմեցի վիճակային կոնսիստորիային հետեւեալ յայտարարութեամբ:—

«Ի 11-էն մարտ ամսոյ, № 1035, վիճակային կոնսիստորիան հրամանագրեց ինձ առաջարկել եւ ես առաջարկեցի ատենիդ մի հարիւր ռուբ. որամ ի պէտս ռոճկի առանձին քարտուղարի սրբազան Առաջնորդի թեմիս:

«Ինչքան ինձ յայտնի է, մի ժամանակ Տափի թաղի ս. Գէորգ եկեղեցին վճարում էր տարեկան յիսուն ռուբ. ի պէտս ռոճկի առանձին գրագրի ս. Առաջնորդի: Յետոյ, երբ կարգուեց թեմական տեսուչ ուսումնարանների, հրաման

եղաւ դադարեցնել 50 ռուբ. վճարքը եւ նոցա փոխարէն տալ տարեկան 100 ռուբ., որով պէտք է հոգացուի տեսչի ռոճիկը: Թեմական տեսչի ռոճիկի համար այժմ պահանջում են 150 ռուբ. տարեկան, որի մասին կս պատիւ ունեցայ դիմել ատենիդ յայտարարութեամբս 8 փետր., № 10: Ուրեմն միեւնոյն կարիքի համար մի ժամանակ հարկաւոր էր 50 ռ., յետոյ 100 ռ., իսկ այժմ 250 ռուբ.:

«Խնդիրը իսկապէս քանակութեան մասին չէ, այլ սկզբունքի մասին. ուստի, իբրեւ հաւատարմատար եկեղեցու ծխականների եւ արտայայտիչ նրանց զգացմանց, վստահանում եմ խոնարհաբար խնդրել վիճակային կոնսիստորիայից ուշադրութիւն դարձնել հետեւեալ հանգամանքի վրայ:»

«Օրէնքով եւ նախնական ասանդութեամբ, եկեղեցու ստացւածքը պատկանում է նրա ծխականների ընդհանրութեան եւ կարող է գործադրուել միայն վերջինի հասանութեամբ եւ որոշմամբ. իսկ հոգեւոր իշխանութեան վրայ պարտք է դրվում հսկել, որպէս զի այդ ստացուածքը կորստի չը մատնուի: Իրօք հսկողութիւն չը կայ նրա փոխարէն վերջին մի-երկու տասնեակ տարիների ընթացքում մոցնվում է մի այլ ուղղութիւն, որը առաջ գնալով, սակաւ առ սակաւ, խախտում է ժողովրդի իրաւունքը, անտես է առնում նրան եւ ընտելացնում է նրան անտարբե-

13595

բութեան ղէպի եկեղեցու շահերը՝ թէ՛ ըստ նիւթականին եւ թէ՛ ըստ քարոյականին, եւ քառնալով նրանից նրա հոգացողութեան գործը, օտարացնում է նրան եկեղեցուց: Այդ ուղղութեան շնորհիւ, ժողովուրդը այլ եւս ինքն իրեն չէ համարում եկեղեցու տէր եւ պարտաւոր հոգալու նրա շահերը, որովհետեւ նրա իրաւունքը եւ պարտաւորութիւնը այժմ անցել են երէցփոխանի եւ հոգեւոր իշխանութեան ձեռքը: Այդ է պատճառը, որ ժողովուրդը չէ յամախում ծխականների ժողովները, չէ հսկում եւ չէ քննում երէցփոխանի գործունէութիւնը, որովհետեւ եկեղեցու ստացուածքի կարգադրիչը ինքը չէ: Այդ դրութիւնը, իմ կարծիքով, մեծ վտանգ է սպառնում եկեղեցուն, շարժելով նրա հիմքը, որ ժողովուրդն է. հարկաւոր է յորդորել, խրախուսել, կապել նրան եկեղեցու շահերի հետ. իսկ այդ կարելի է անել ընդունելով եւ գործադրելով նրա օրինական իրաւունքը եւ ցոյց տալով, որ հոգեւոր իշխանութիւնը իրօք հսկում է երէցփոխանների գործունէութեան վերայ, անաչառութեամբ պաշտպանելով եկեղեցու եւ ժողովրդի շահերը եւ ուղղելով օրինազանցութեամբ կատարածը, եւ այլն: Այն, ինչ որ տեսնում ենք մեր շուրջը, շատ հեռու է այդ զաղափարներից, իսկ ժողովուրդը միջոց եւ յարմարութիւն չունենալով անկարգութիւնների առաջն առնել, երեսը շուռ է տալիս եկեղեցուց, քայց խուլ տրտունջ

ցոյց տալով անդադար:»

«Իմ սրբազան պարտաւորութիւնս է առաջարկել յիշեալ հանգամանքները ի քարհնամ նկատողութիւն կոնսիստորիայի եւ խնդրել տալ ինձ հրահանգ, որով կարժող լինիմ ղեկավարուել նման ղէպերում:»

«Ժողովրդի կարծիքը, որի հետ համաձայն եմ եւ ես, այն է, որ թեմական կարիքներին ծառայող պաշտօնեան պէտք է ստանայ իր ուժիկը ընդհանուր թեմական արդիւնքներից:»

Ի պատասխան այդ յայտարարութեան, կոնսիստորիան ի 4 ապրիլի, № 1414, հրամանագրեց ինձ ի գիտութիւն, թէ՛ «պարտաւորութիւնք երէցփոխանաց եկեղեցեաց հայոց գծագրեալ են 1024—1032 յօդուածներում, XI հատ. 1 մասին օրինաց: Ըստ այսոցիկ օրինաց եւ ըստ նախնաւանդ կարգի՝ երէցփոխանք ընտրին ի ժողովրդոց եւ հաստատին ի պաշտաման ի թեմական իշխանութենէ, որում եւ ենթադրին: Ոչ մի օրէնք կամ նախնական արանդութիւն չեն տուեալ երէցփոխանաց իրաւունս չը կատարելոյ զհրաման թեմական իշխանութեան կամ զառաջարկելոյ զդատողութիւնս ի մասէն-արդէն եղեալ կարգադրութեան իշխանութեան վերաբերմամբ եկեղեցական կայից եւ դրամից: Ըստ այսմ գտանելով ի պաշտաման երէցփոխանի եկեղեցոյ, պարտաւոր էք դուք կատարել ճշտիւ զհրամանս հոգեւոր իշխանութեանս ձերոյ, առանց

աւելորդ եւ անտեղի գրագրութեանց եւ առանց կազմելոյ բացառութիւն ի միւս երէցփոխանաց:

Համոզուելով, որ կոնսիստորիան ոչ միջոց եւ ոչ ցանկութիւն ունի լրջօրէն քննելու յարուցած խնդիրները եւ խոստովանելով, որ աւելորդ եւ անտեղի է եղել գրագրութիւնս, ես պատասխանեցի, որ կարծում եմ աւելորդ գրագրութիւնս, թողնելով, որ յիշեալ խնդիրները բացատրուեն եւ վճիռ ստանան իր ժամանակին պատշաճաւոր տեղում:

Թէ ինչ հայեացք ունի կոնսիստորիան երէցփոխանի վրայ եւ նրա փոխադարձ յարաբերութեան վրայ կոնսիստորիայի հետ, այդ պարզ երեւում է նրա վերոյիշեալ հրամանից, № 1414, եւ նրա եզրակացութիւնից իր ցոյց տուած օրէնքի յօդուածների իմաստի մասին: Ահա այդ յօդուածների բովանդակութիւնը:

Յօդ. 1021. Եկեղեցական կայքի կառավարութեան գործի վրայ ընդհանուր հսկողութիւնը պատկանում է Սինոդին, իսկ ամեն մի թեմում— թեմակալ առաջնորդին:

Յօդ. 1024. Մասնաւորապէս հայոց եկեղեցիների կայքերի կառավարութիւնը անմիջապէս կախուած է ամեն մի եկեղեցու երէցփոխանից:

Յօդ. 1028. Հսկողութիւնը եկեղեցու կայքերի ամբողջապէս պահպանութեան վրայ, եկեղեցու արդիւնքների կառավարութիւնը, շինութիւն անելը եւ շինութիւնների կարկատելը, նրանց վարձով

տալը, եկեղեցու գործերին վերաբերեալ փաստաբանութիւնը պատշաճաւոր դիւանատներում եւ այլ դրանց նման գործողութիւնները կազմում են երէցփոխանի պարտաւորութիւնը:

Յօդ. 1031. Տարին անցնելուց յետոյ, երէցփոխանը պարտաւոր է տալ ծխականների ժողովի առաջ լիակատար հաշիւ իր բոլոր գործողութիւնների մասին եկեղեցու տնտեսական գործերի վերաբերմամբ: Այդ հաշիւը նա յետոյ առաջարկում է կոնսիստորիային:

Եւ ահա այդ յօդուածների իմաստից կոնսիստորիան գալիս է այն եզրակացութեան, որ երէցփոխանը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի անմիջապէս իրեն ստորագրեալ պաշտօնեայ, որ պարտաւոր է կատարել կոնսիստորիայի ամեն մի հրամանը, չը համարձակուել մինչեւ անգամ դատողութիւն տալ արդէն եղած կարգադրութեան մասին: Կոնսիստորիան չէ կամենում յիշել, որ մինչեւ անգամ ամենայնոին ստորագրեալի համար պարտաւորական է իշխանութեան միայն օրինական հրամանը: Անուշագիր գօլով դէպի իրաւասութեան սահմանները, նա մի կողմից պնդում է, թէ տնտեսական գործերում ժողովրդի հաւատարմատար եւ ներկայացուցիչ երէցփոխանը չպարտաւոր է կատարել ժողով զհրաման հոգեւոր իշխանութեան՝ առանց դատողութեան, եւ այդ տեսակէտից նայելով, նա այս կամ այն գումարը պահանջելու ժամանակ երբէք չէ հաղորդում, թէ ինչ սխտէմայով

է բաժանուում եկեղեցիների վրայ պահանջած գումարը, որքան է կարելոր գումարի ընդհանուր քանակութիւնը եւ ամենայն մի եկեղեցու վրա ինչքան է մասնատրուած: Իսկ միւս կողմից, ըստ հրամանի ս. Էջմիածնի Սինոդի, հրամանագրում է նման դէպքերում «առնել զհամութիւն ժողովրդաց»: Օրինակ, Աղբուլազի եկեղեցին պարտ է մեր եկեղեցուն 500 ռ.: Տիկին Նունէ Եանշեանցը դիմել է Ահհափառ Կաթողիկոսին, խնդրելով ազատել Աղբուլազի եկեղեցին այս պարտքից: Այժմ, ըստ հրամանի Սինոդի ս. Էջմիածնի, կոնսիստորիան պատուիրում է ինձ «յայտնել զայսմանէ ժողովրդաց Տալի թաղի ս. Գէորգ եկեղեցւոյ վասն առնելոյ զհամութիւն նոցա առ այս»: Կոնսիստորիան չէ նկատում, թէ որքան մեծ է հակասութիւնը նրա եւ ս. Սինոդի տեսակէտների մէջ: Անշուշտ ցաւալի է, որ կոնսիստորիան, իմ կարծիքով, սխալ է ըմբռնում իր իրաւասութեան չափը, որի հետեւանքը կարող են լինել եւ լինում են զանազան թիրբիմացութիւններ ի վնաս ընդհանուր եկեղեցու, ուստի ցանկալի է, որ թեմակալ Առաջնորդը բարեհաճէր ուշադրութեան առնել այդ հանգամանքը, համոզելով ում անկէ, թէ երէցփոխանին հաստատելը նշանակում է միայն պաշտօնապէս ճանաչել ընտրութիւնը կանոնաւոր, եւ դրանից չէ առաջանում կոնսիստորիայի համար որեւէ նոր, չը նախատեսուած իրաւունք: Գալով միւս կէտերին, ենթադրելի է, որ արտաքոյ եկեղեցու

անմիջական կարիքներին, նրա գումարները կարող են ծախսուել միայն ժողովրդի հաճութեամբ: Որովհետեւ յորդանանի կամուրջը շինվում է ոչ այս կամ այն եկեղեցու համար, այլ ծառայում է Թիֆլիսի բոլոր եկեղեցիների անմիջական կարիքներին, ուստի բնական է, որ նրա վրայ առնելիք ծախքը պարտ են վճարել բոլոր եկեղեցիները: Տիկին Նունէ Եանշեանցի խնդիրը, իմ կարծիքով, յարգելի է, որովհետեւ պարտքը վերցրուած է զնելու համար այն տունը, որի մէջ այժմ զետեղուած է ծխական ուսումնարանը, իսկ միւս կողմից թէ ուսումնարանը եւ թէ եկեղեցին աղքատ են եւ անկարող վճարել այդ պարտքը:

Ե. ԲԱՆԿԵՐԻ ԷՆՏ ՈՒՆԵՆԱԼԻՔ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

Այս խնդրի վերաբերմամբ կարելի է տեսնել բոլոր եղելութիւնը հետեւեալ յայտարարութիւնից, որով ես դիմեցի կոնսիստորիային այս տարուայ ապրիլի 4-ին, ընդ № 20:

«Ի 14 անցեալ մարտի, № 14, ես երկրորդ անգամ խնդրեցի կոնսիստորիայից հաղորդել տեղիս առեւտրական քանկին, որ նա ծանաչելով ինձ իբրեւ եկեղեցու երէցփոխան, տայ ինձ եկեղեցական գումարների տոկոսիքը, նոյն իսկ գումարները, երբ լրանում է նրանց պայմանադրեալ ժամանակը»:

«Ի պատասխան այդ յայտարարութեան, կոնսիստորիան մարտի 28-ից, ընդ № 1238, հրամանագրում է ինձ «ի գիտութիւն, թէ յերաքանչիւր նուազի կարելորութեան ստանալոյ ի քանկէն գտողոսիս կամ զգումարս եկեղեցական քիւլեթից՝ հարկ է ձեզ դիմել ի կոնսիստորիայս՝ վասն հաղորդելոյ քանկին առ ի տալ ձեզ զայնս, որպէս առնեն եւ երէցփոխանք միս եկեղեցեաց Տփխիսայ: Զայսմանէ հաղորդել եւ արքունական քանկին ի գիտութիւն»:

«Ամենայն մի կարգադրութիւն պէտք է որ ունենայ իր նպատակը եւ պատճառը եւ ծագէ որոշ սկզբունքից, ուստի ընական է, որ ես ցանկացայ որոնել նոյնը եւ կոնսիստորիայի յիշեալ հրամանի մէջ, եւ ես որոնեցի, քայց չը գտայ: «Որպէս առնեն եւ երէցփոխանք միս եկեղեցեաց Տփխիսայ» խօսքերը չեն կարող լինել ոչ պատճառ եւ ոչ օրինակ, եթէ հիմնուած չեն օրէնքի վրայ, այլ, ընդհակառակը, իբրեւ կարգ, սխալմամբ ներմուծած, կարօտ է խափանման: Կարելի է ենթադրել, որ կոնսիստորիայի չարտայայտած նպատակն է պահել երէցփոխանին այն դրութեան մէջ, որ նա միջոց չունենայ վատնելու եկեղեցու ստացուածքը: Եստ ցանկալի եւ գովելի նպատակ, մանաւանդ այն հիմնարկութեան կողմից, որ ոչ միայն իրաւունք, այլ եւ պարտաւորութիւն ունի հսկելու, որ եկեղեցու ստացուածքը չը մատնուի կորուստի: Բայց ար-

դեօք յիշեալ կարգը նպատակայարմար է՞ եւ ապահովում է՞ կորստից: Ինքը կոնսիստորիան չի հերքիլ, որ այդ հարցի պատասխանը կարող է լինել միայն քացասական»:

«Ինչպէս ես պատիւ ունեցայ յայտնել ատենիդ մի այլ յայտարարութեան մէջ մարտի 25-ին, ընդ № 18, վստահանում եմ պնդել եւ այժմ, թէ կոնսիստորիայի կողմից իրօք հսկողութիւն չը կայ երէցփոխանների գործունէութեան եւ եկեղեցական գումարների պահպանութեան եղանակի վրայ: Իբրեւ ապացոյց, ես կարող եմ մատնացոյց անել նոյն իսկ իմ գործունէութեան վրայ: 9 ամսուայ գործավարութեանս ընթացքում ես ստացել եմ տասնեակ հազարներ եկեղեցական գումարներ: Կանցնի մի տարի եւս եւ ես, միեւնոյն է՝ միանուագ թէ առանձին-առանձին թոյլտուութեամբ,—կը ստանամ եւս տասնեակ հազարներ: Այդ քոլորը ես կարող էի եւ կարող եմ վատնել անխափան, եւ կանցնի առնուազն երկու տարի, մինչեւ որ կը յայտնուի կորուստը, որովհետեւ իրօք հսկողութիւն չը կայ, որովհետեւ հարցնող չը կայ, թէ ուր են գումարները»:

«Կոնսիստորիան պահանջում է, որ մի կամ երկու հարիւր բուք. տողոսիք ստանալու համար ես ամեն անգամ առանձնապէս դիմեմ կոնսիստորիային եւ թոյլտուութիւն խնդրեմ, եւ միեւնոյն ժամանակ թողնում է առանց ուշադրու-

թեան, որ եկեղեցու կալուածները ես երկար տարիներով տալիս եմ կապալով, առանց ոչ ոքից հարցնելու, որ այդ կալուածների արդիւնքը ստանում եմ հազարներով, նոյնպէս առանց հարցնելու: Այդպիսի հակասութիւններ չը պիտի տեղի ունենան եւ յետոյ ունեն, անշուշտ սխալ է այդ ձեւերից կամ մէկը կամ միւրը: Տարակոյս չը կայ, որ միեւնոյն գործի շահերը չեն կարող գնալ մէկը միւսի հակառակ ուղղութեամբ, ուստի անհրաժեշտ է կապել գործի ամեն կողմերը միասին եւ տալ միակերպ ուղղութիւն: Այդ պահանջում են նոյն իսկ հետեւողութեան կանոնները, հետեւողութեան, որ յատուկ պէտք է լինի իշխանական կարգադրութիւններին»:

«Այդ հակասութիւնները, իմ հասկացողութեամբ, առաջ են գալիս նրանից, որ շփոթվում են երկու տեսակ իրաւունքներ, որոնց մէջ կայ մեծ տարբերութիւն, այն է հսկողական եւ իշխանական: Այդ տարբերութիւնը չը պէտք է տալ զանցառութեան»:

«Ինձ հարկաւոր է տարին 15—20 անգամ ստանալ քանկերից կամ կտրոններ, կամ տոկոս, կամ գումար: Բացի յիշեալ փաստերից, ես չունենալով քարտուղար, անկարող եմ այդքան գրագրութիւն անել կոնսիստորիայի հետ, լոկ աննպատակ ձեւականութիւն եւ ինքնախաբէութիւն պահպանելու համար: Ուստի դարձեալ խոնարհաբար խնդրում եմ կարգադրել, որ քանկե-

րը տան ինձ եկեղեցու հասանելիքը, իբրեւ երէցփոխանի: Եթէ այնուամենայնիւ կոնսիստորիան կը քարեհամէ չընդունել խնդիրս եւ կաշկանդել գործունէութիւնս, այն ժամանակ խնդրեմ առնել ըստ հաճոյից մի այլ տեսակ կարգադրութիւն, որպէս զի եկեղեցին, չը ստանալով ժամանակին իրեն հասանելիքը, չը զրկուի իր շահերից: Ի նկատի առնելու է, որ կոնսիստորիայի ընդունած ձեւով ստանալու պաշտօնը կարելի է յանձնել կոնսիստորիայում ծառայողներից մէկին, ինչպէս եւ ամեն մի անցաւորի, այլ ոչ երէցփոխանի, որ ունի ստանալու իրաւունքը ի պաշտօնէ, մինչդեռ նա երեցփոխան է»:

«Հարկաւոր եմ համարում յարակցել, թէ ես պատշաճաւոր ուշադրութեան առայ ատենիդ կարգադրութիւնը, որով նա, փոխելով իր անցեալ տարուայ սեպտեմբերին, երեւի սխալմամբ արած կարգադրութիւնը, սահմանափակեց այն իրաւունքը, որը վայելում էի ես 9 ամիս, իսկ իմ նախորդը՝ 13 տարի, այսինքն որ արքունական ըմբիւր այլ եւս չը տայ ինձ ոչինչ, առանց առանձին տնօրէնութեան կոնսիստորիայի: Ես ոչ ոքի, ուրեմն եւ կոնսիստորիային երբէք առիթ չեմ տուել այդպիսի տարօրինակ եւ վերաւորական միջոցով պաշտօնապէս յայտարարել ի լուր ամենեցուն, որ ինձ չէ կարելի հաւատ ընծայել: Թողնենք, որ այդ դէպքը մնայ, իբրեւ խնդիր առանձին վերահասութեան: Բայց ես

պարտաւոր եմ ասելու եւ քնական է, որ մինչեւ այդ ինքնուրոյն կարգադրութիւնը փոխելը ինձ համար անկարելի է ղիմել արքունական բանկին՝ որեւէ գումար ստանալու համար, ուստի կը մնայ, որ կոնսիստորիան ինքը կարգադրութիւն անէ այդ մասին, ինչպէս կը քարեհամէ»:

«Տնտեսութեան վերաբերեալ խնդիրը կարօտ է առանձին քննադատութեան. ես կը յայտնեմ իմ կարծիքը այդ մասին, երբ պաշտօնաւոր իշխանութիւնը կամք եւ ցանկութիւն կունենայ լսելու»:

«Որովհետեւ վիճակային կոնսիստորիայի շնորհիւ յարուցած յիշեալ խնդիրները չեն կարող երկար ժամանակ մնալ անորոշ, առանց մնասելու եկեղեցու շահերին, ուստի ամենախոնարհաբար խնդրում եմ, զեկուցանելով այս մասին սրբազան Առաջնորդին, փութացնել, ինչքան հնարաւոր է, յայտարարութեանս պատասխանը, եւ եթէ ես սխալ եմ ըմբռնել Հայաստանեայց եկեղեցու կազմակերպութեան առանձնայատկութիւնները եւ իմաստը, քարեհամէլ քացատրել ինձ սխալներս»:

«Քաջայոյս եմ, որ իսկոյն կը վերանայ ամեն թիւրիմացութիւն, եթէ պարզունն այն սկզբունքները, որոնցով կառավարվում է հայ եկեղեցին: Դրա համար բաւական է լրջօրէն քննել եւ լուծել հետեւեալ խնդիրները.—

1) եկեղեցու ստացուածքի եւ երէցփոխանի վերաբերմամբ կոնսիստորիայի իրաւասութիւնը

հսկողակա՞ն է, թէ իշխանական, եւ

2) եկեղեցու կալուածների, արդիւնքների եւ ծախքերի կարգադրելու ծխականներն են, թէ կոնսիստորիան կամ մի այլ հիմնարկութիւն, որ կարող է կարգադրել առանց ծխականների որոշման եւ հաւանութեան»:

«Այդ խնդիրները որոշելուց յետոյ կը պարզուի, թէ եկեղեցու հասանելիքը ստանալու իրաւունքը պատկանո՞ւմ է երէցփոխանին ի պաշտօնէ, թէ կախուած է կոնսիստորիայի հաճոյքից, եւ թէ երէցփոխանը պարտաւոր է հնազանդուել կոնսիստորիայի ամեն մի հրամանին անպայման, թէ միայն այն հրամանին, որ հիմնուած է հսկողական իրաւունքի վրայ»:

Ինչ յայտնի չէ, թէ կոնսիստորիան ինչ տնօրէնութիւն է արել յայտարարութեանս առթիւ, բայց հետեւեալ հանգամանքից երեւում է, որ յայտարարութիւնս ոչ մի չափով չէ արժանացել ուշադրութեան: Ահա ապացոյցը: Ապրիլի 21-ին արքունական բանկը հրատարակեց իր պայմանները կօմիտրիայի մասին: Ի նկատի առնելով եկեղեցու շահերը, ես նոյն ամսի 25-ին յիշեցրի կոնսիստորիային այդ մասին, յարակցելով, թէ մեր եկեղեցին ունի 2 հատ 500 բուբլիանոց արքունական բանկի տոմսեր եւ 4000 բուբլի ստանալիք առեւտրական բանկից մի տոմսով, որի ժամանակը լրացել է ամսի 19-ին: Կոնսիստորիան ապրիլի 27-ին հրամանագրեց 500 բուբլիանոց տոմսերի մասին

վարուել համաձայն հրատարակած յայտարարութեան, իսկ 4000 բուբուռ տոմսը ներկայացնել բանկին եւ փոխարէն նորը ստանալ: Բնականաբար ես հրաժարուեցի կատարել այդ յանձնարարութիւնը, մանաւանդ որ իրաւունք էլ չէր տուած ստանալ 500 բուբուռնոց տոմսերը, որոնք յանձնուած են արքունական բանկին ի պահեստ: Կան եւ այլ ստանալիքներ, որոնց ժամանակը նոյնպէս լրացած է, բայց չեն ստացուում շնորհիւ կոնսիստորիայի կարգադրութիւնների, որոնք կաշկանդում են գործունէութիւնս՝ ի վնաս եկեղեցու գրամական շահերի: Ես մինչեւ անգամ չը հասկացայ, թէ ինչ է ցանկանում ասել կոնսիստորիան, գործածելով այս բառերը. «վարիլ համաձայն հրատարակած յայտարարութեան». եւ ինչ իրաւամբ կամ նպատակով կարգադրում է նա 4000 բուբուռ տոմսը փոխել նորի, առանց իմանալու իմ կարծիքը, թէ ինչպէս բարւոք կը համարեմ ես շահեցնել գումարը:

Ես իսկոյն պատասխանեցի, որ կոնսիստորիայի հրամանը կատարելը մասամբ ինձ չէ պատկանում եւ մասամբ էլ անկարող եմ: Իմ միակ նպատակս էր յիշեցնել կոնսիստորիային տոմսերի մասին, թողնելով մնացեալը նրա տնօրէնութեան, համաձայն № 20 յայտարարութեանս:

Իսկապէս ես չեմ կարողանում հասկանալ կոնսիստորիայի ձգտումը դէպի մի տեսակ անսահման իշխանութիւն՝ մի կողմից, եւ անպայման կոյր հնազանդութիւն՝ միւս կողմից, մանաւանդ որ ոչ մի

կերպ չէ նկատուում նրա կարգադրութիւնների մէջ որեւէ էական նպատակ յագուտ եկեղեցու շահերի: Անդհակառակը, ձգտելով վայելել իշխանական իրաւունք, նա երբէք չէ գործադրում այն իրաւունքը, որ իսկապէս ունի իր ցոյց տուած օրէնքի 985 յօդուածի 15-րդ կէտի զօրութեամբ, այն է՝ ամեն ամիս քննել եկեղեցու կանխիկ դրամները եւ դրամական դօկումէնտները: Այդ իրաւունքը հաւասար է պարտաւորութեան: Հիմնուելով վերոյիշեալ պատճառաբանութիւնների վրայ, ես համարում եմ կոնսիստորիայի հայեացքը եւ կարգադրութիւնները հակառակ հին եւ նոր օրէնքի, ուստի կը մնայ, որ ժողովուրդը, եթէ իրաւացի գտնէ պատճառաբանութիւնս, խնդրէ սրբազան Առաջնորդին թելադրել կոնսիստորիային նրա իրաւասութեան սահմանները եւ բռնելիք ուղղութիւնը:

2. ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ:

Ինչ հարկաւոր է գալիս տարուայ ընթացքում 150 կամ անելի ծախուց յօդուածներ գրել ելեւմտից մատեանի մէջ: Հին ժամանակներում պաշտօնական դիւնատների մէջ ընդունուած ձեւն այն էր, որ դրամ ստացողը վաւերացնում էր ստացումը ստորագրութեամբ մատեանի մէջ յօդուածի տակ: Այդ ձեւը արդէն վերացած է ամեն տեղ, բայց մնում է կոնսիստորիայում եւ եկեղեցում: Այդ ձեւը ստիպում էր ինձ անդադար դրամի հետ միասին ուղարկել եւ մատեանը՝ ստորագրութեան

Համար: Պատահում էր, որ ծառան չը գտնելով տանը հոգաբարձուին, կամ խնամակալին, կամ խանութի տիրոջ եւ այլոց, պահում էր մատեանը ամբողջ օրը իր մօտ, որ յետոյ գնայ երկրորդ կամ երրորդ անգամ: Որովհետեւ եկեղեցու բոլոր ստացուածքի հաշիւները այդ մատեանի մէջ են, իսկ մատեանը կարող է ենթարկուել կորստի որեւէ փորձանքի պատճառաւ, ես ստիպուեցայ փոխել այդ ձեւը եւ դրամները վճարելով, ստորագրութիւն առնել օրդէրի վրայ: Կոնսիստորիան չէ համաձայնվում ստորագրութեամբ օրդէրի վրայ վաւերացնել նրան ուղարկելիք դրամի ստացումը, այլ պահանջում է անպատճառ տալ ստորագրել Տին ձեւով, մատեանի մէջ:

Կոնսիստորիան չէ բացատրում, թէ նա ինչ զանազանութիւն է գտնում օրդէրի վրայ կամ մատեանի մէջ տուած ստորագրութիւնների մէջ, իսկ ես դժուարանում եմ վերածել Տին եղանակին նոր մտցրած ձեւը, կամ գործադրել միաժամանակ երկուսը միասին, ուստի այդ խնդիրը մնում է բաց: Սակայն ես չեմ կարող առնել իմ պատասխանատուութեան վրայ, եթէ Տին ձեւի շնորհիւ մատեանը որեւէ պատահմունքից կորստի մատնուի: Վերջապէս, եթէ իմ մտցրած ձեւի մէջ կայ անյարմարութիւն, պէտք է ցոյց տալ եւ, պահանջելով Տին ձեւի վերականգնումն, պատճառաբանել դրա կարելորութիւնը, իսկ կոնսիստորիան չէ առնում ոչ մէկը եւ ոչ էլ միւսը:

Այս զեկուցման մէջ մանրմանն թւած հանգամանքները առաջ են բերում մի շարք հարցեր, որոնք կարօտ են ծիսականների ժողովի քննութեան եւ որոշման: Մինչեւ որ չը հեռացնուեն այս արգելքները, որոնց ես պատահում եմ ամեն քայլում հոգեւոր Իշխանութեան կողմից, ակնբերել է, որ մեր եկեղեցու կայից գործը կանոնաւորութիւն չի ստանալ:

Ա. Հա հարցերը:

Ա. Օրիորդաց ծիսական ուսումնարանի վերաբերութեամբ ժողովը արդեօք համամիտ է ինձ հետ, որ ուսումնարանը պէտք է կառավարուի հոգաբարձութեան ձեռքով, այլ ոչ խնամակալի, եւ որ ուսումնարանի շինութեան նորոգութեան ծախսը պէտք է հոգայ ս. Սարգիս եկեղեցին, որի սեփականութիւնն է այդ շինութիւնը:

Բ. Ժողովը հարկաւոր է համարում խնդրել սրբազան Առաջնորդի կարգադրութիւնը՝ ենթակելու Հաւաքարի ուսումնարանի գործը ընդհանուր կանոնների, որոնք հաստատուած են վասն եկեղեցական-ծիսական ուսումնարանաց հայոց:

Գ. Նարոնակել արտասահմանում գտնուող սարկաւազների թոշակի տալը, թէ դադարեցնել:

Դ. Ի՞նչ չափով է երէցփոխանը ստորագրեալ կոնսիստորիային. ունի՞ կոնսիստորիան իրաւունք պահանջելու երէցփոխանից այս կամ այն գումարը, առանց նախօրէն ստանալու ժողովրդի հաճութիւնը. ընդունում է ժողովը յորդանանու կամրջի

ծախքը եւ ցանկանձում է ազատել 500 բուրբու պարտքից Աղբուլաղի եկեղեցին՝ նրա չքաւորութեան պատճառով:

Ն. Արգեօք՝ իրաւացի է գտնոււմ ժողովը երէցփոխանի պատճառաբանութիւնը գումարների կառավարութեան, բանկերի հետ ունենալիք յարաբերութեան եւ կոնսիստորիայի կարգադրութիւնների անկանոնութեան մասին, եւ ցանկանձում է խնդրել սրբազան Առաջնորդին, որ նա հրամայէ վերջ տալ այդ անկանոնութեան:

Զ. Ժողովը գտնոււմ է արգեօք յարգելի պատճառ վերացնել օրգէրները, մտցնել կրկին հին ձեւը եւ կարծիք եմ ազատ համարուել պատասխանատուութիւնից, եթէ որեւէ անակնկալ դիպուածից մատեանը կորստի մատնուի:

Կատարելով պարտաւորութիւնս, ես առաջարկում եմ յիշեալ հարցերը ժողովի քննութեան եւ բարեհաճ տնօրէնութեան:

Մինչդեռ ժողովը գումարուած է, խնդրեմ կարգադրել մի գործ եւս: Եկեղեցու վերանորոգութեան մասին գուցէ մինչեւ մի ամիսը ստացուի պատշաճաւոր իշխանութիւնների թոյլտուութիւնը: Այդ գործի բոլոր հոգացողութիւնը ստանձնելը բարձր է իմ ոյժից եւ կարողութիւնից, ուստի խնդրեմ յանձնել այդ հոգացողութիւնը մի յանձնաժողովի, ընտրելով այժմէն իսկ նորա անդամներին եւ օրոշելով, որ յանձնաժողովը կարող է անմիջական հսկողութիւնը շինութիւնների վերայ:

յանձնել իւր անդամներից մէկին կամ միւսին, գնել կարեւոր նիւթեր, պայման կապել ճարտարապետի եւ վարպետների հետ, որոշել վճարքների եւ նրանց ստուգելու ձեւը եւ միջոցը եւ առհասարակ տէր հանդիսանալ շինութիւնների եւ վերանորոգութիւնների գործում: Յանձնաժողովը պէտք է նիստեր ունենայ ոչ սակաւ, քան շաբաթը միանգամ եւ համառօտաբար արձանագրէ իւր որոշումները եւ կարգադրութիւնները. նա պէտք է իրաւունք ունենայ վարձելու հաշւապահ կամ մի այլ պաշտօնեայ, եթէ կարեւոր կը համարէ:

Երէցփոխան Բ. Մելիք-Ղարապետօղտանց



